

891.995

Ա. 82

Արագ



ԱՆՔԱՆՏ  
ՎՈՐՍԿԱՆՆԵՐ

ՊԵՏԷՐԱՏ

ՂԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՅ ՄԱՆԿԱԴԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՅԵՐԵՎԱՆ ԲԱԺԻՆ 1 9 3 7



Յերբ Վանին շատ հեռացավ, Հանին կանչեց յետևից.

— Վանի, կամաց գնա, զալիս եմ:

— Իե արի, արի, ձայն տվեց Վանին ու կանգ առավ, սպասելով ընկերոջը:

Հանին արագացրեց քայլերն ու վերջապես հեկարով հասավ նրան:

— Հը՛, պրծար հաց ուտելը, — հարցրեց Վանին:

— Պրծա, բայց ելի յեմ ուզում:

— Ելի՞, ի՞նչ ե, քո փորը հոր ե՞.

— Հա, իսկի չի լցվում:

Այժմ նրանք գնում էին դաշտի ճանապարհով, իսկ Բողարն ու Շողարը վազվզում էին շորս կողմը, հոտոտելով թփերը:

Գարնան սկիզբն էր. ձյունը նոր էր հալվել, ամեն կողմից յերևում էին ձնծաղիկներ: Ընկերները փայտի ծայրով հանում էին ձնծաղիկների քաղցրիկ արմատները և ուտում:

Մեկ ել հանկարծ թփի տակից դուրս թռավ մի փոքրիկ նապաստակ: Շներն իսկույն վազեցին յետևից, տղաներն ել ճշարով, վազեցին նույն կողմը:



Նապաստակը մի ըրպեյում թռավ, հասավ մոտակա բլրին, բայց այնտեղ մի գյուղացի նկատեց ու արագ շարտեց նրա առաջ իր ձեռնափայտը: Նապաստակը փայտի հարվածից ընկավ գետնին ու մնաց տեղը:

Վանին ու Հանին վազելով մոտեցան գյուղացուն, տեսան՝ նա բռնել է ձեռին նապաստակին ու նայում է:

Սիրտը խփում է, կենդանի յե,— ասաց նա.— քիչ հետո ուշքի կգա. դե, տղաներ, ձեզ եմ ընծայում, լավ կպահեք:

— Շնորհակալ ենք քեռի,— ասացին ընկերներն ու նապաստակն առած շտապեցին դեպի տուն: Նրանք անչափ ուրախ եյին, փոք հետները փորս եյին տանում:

Ուրախ եյին և Բողարն ու Շողարը. նրանք մոտենում եյին նապաստակին, հոտոտում եյին ու նորից վազում առաջ:

Յերբ ընկերները տուն հասան, ամբողջ թաղի տղաները մեկ-մեկուց իմանալով, յեկան հավաքվեցին նրանց շուրջը: Ամենքը մոտենում եյին, ձեռքը քսում նապաստակին և հարցնում եյին, թե ի՞նչպես են բռնել: Տղաներն էլ պատմում եյին բոլորը:



Շուտով նապաստակը ուշքի յեկավ, բայց սուաջին ուրը փոչինչ չեք ուտում: Նա փոչ մի վերք չունեք, միայն մի փոտը փոքր ինչ ցավում եք, յեքք ձեռք եյին տալիս:

Վանու հայրը տախտակներից մի վանդակ շինեց նապաստակի համար: Այժմ նա իրեն ավելի ազատ եք զգում, ու հոտոտելով պատվում եք վանդակում: Հետևյալ ուրը նա սկսեց ուտել. տղաները տալիս եյին կաղամբ, գաղար, իսկ Հանին իր հացը միշտ փշրում եք նրա առաջ:

Մի շաբաթից հետո նապաստակը սկսեց տխրել. շատ քիչ եր ուտում, նույնիսկ իր սիրած կաղամբը:

— Գիտե՞ս, ինչու յե տխրում, — ասաց Հանին, — յերևի հիշում ե ազատ դաշտերը, արի տանենք զբոսանքի:

— Տանենք, — համաձայնեց Վանին:

Ընկերները վերցրին նապաստակին ու գնացին դաշտը: Այս անգամ նրանք չտարան հետները շներին, վորովհետև նապաստակը վախենում եր նրանցից: Բայց Հանին չեր մոռացել իր հացը. նա մի մեծ կտոր դրել եր իր ծոցում:

Վանին սկսեց ձնծաղիկներ քաղել, իսկ Հանին թելով կապեց նապաստակի վոտը ու բաց թողեց, ձեռքին պահելով թելի ծայրը: Հետո նա հանեց ծոցից հացն ու սկսեց անոռ-անոռ կծոտել:

Հանին այնքան տարվեց հաց ուտելով, վոր մոռացավ նապաստակին:

Մեկ ել հանկարծ... այ քեզ դժբախտություն. նապաստակը քաշեց թելից,

դուրս ընկավ Հանու ձեռքից ու պոկ վախավ: Հանին մնաց ապշած, բայց ինչ կարող եր անել:

Մոտ յեկավ Վանին:

— Ո՛ւր ե նապաստակը, — հարցրեց նա:

— Փախավ, — տխուր ասաց Հանին ու գլուխը կախեց:

— Ե՛հ, անշնորք, հազիվ վորս եյինք ճարել, այն ել վախցրիր. քո հաց ուտելն ուղղակի պատիժ ե, ելի...

Յերկու ընկերները տխուր վերադարձան տուն:

Հետեվյալ որը Վանին ասաց.

— Վնչինչ, Հանի, մի տխրի... ելի կբռնենք նապաստակ, միայն թե դու հետդ հաց չվերցնես:

### 3. ՆՈՐ ՎՈՐՍԸ

Վանին ու Հանին վճռեցին անպատճառ մի նապաստակ բռնել: Նրանք ելի հաճախ գնում եյին վորսի, վերցնում եյին հետները Բողարին ու Շողարին, և թափառում եյին դաշտում: Յերբեմն հանդիպում եյին նապաստակի, բայց շները չեյին կա-

ըողանում յետևից հասնել: Այդպես՝ նրանք  
գնում եյին վորսի ու միշտ վերադա-  
նում դատարկ:

Դպրոցում արդեն գիտեյին այդ բոլորը,  
գիտեյին նույնպես թե ի՞նչպես են նրանք  
փախցրել փոքր նապաստակին, դրա համար  
ել Վանու և Հանու անունը դրել եյին «ան-  
բախտ վորսկաններ»:

Մի որ ել, յերբ յերկու ընկերները  
վերադառնում եյին վորսից, և արդեն հա-  
սել եյին գյուղի պարտեզներին, հանկարծ  
նկատեցին մի մոխրագույն նապաստակ:  
Նա վազեց ու թագնվեց ցանկապատի տակ:

Եները վազեցին ու սկսեցին հաշար:  
Վանին մոտ վազեց ու բռնեց, դուրս քա-  
շեց ցանկապատից:

— Հանի, նապաստակ եմ բռնել — կան-  
չեց նա — մի տես ինչ լավն ե:

— Ես ինչ լավ յեղավ, ասաց Հանին  
մոտ վազելով: Ելի վորս ճարեցինք. ա՛յ,  
թող հիմա յել ընկերները մեզ ասեն «ան-  
բախտ վորսկաններ»: Թող զան տեսնեն ու  
ամաչեն:

Յերկուսն ել ուրախ վերադարձան  
տուն: Ելի նրանց շուրջը հավաքվեցին  
իրենց թաղի տղաները:



— Սա հո նապաստակ չի, ճագար ե.  
— ասաց Լեվիկը. — յես տեսել եմ բժշկի  
տանը. նա նոր ե բերել քաղաքից — հենց  
սրա նման են:

— Ի՞նչ եք ասում, բա սա նապաստակ  
չի՞, — տաքացավ Վանին:

— Նապաստակի նման է, բայց նապաս-  
տակ չի, — ասաց Լեվիկը ծիծաղելով. զուք  
ել կասեք՝ վորս եք բռնել. սա հո տանու-  
վորս ե:

Վանին ու Հանին նայում էին իրար  
յերեսին:

— Ս, քեզ բան, — ասաց Վանին, — վոչ  
նապաստակ ե, վոչ ել մերն ե. այս ի՞նչ-  
պես յեղավ, վոր սխալվեցինք:

— Ճիշտ վորան բախտ վորսկաններ ենք,  
— ասաց Հանին ծիծաղելով. արի ճագար-  
ներ պահենք:

— Ս, յ լավ բան ասացիր, — ուրախա-  
ցավ Վանին:

Հենց նույն օրը նրանք վերադարձրին  
բժշկին իրենց վորսն ու խնդրեցին նրանից  
մի զույգ ճագար:

Ս, յ մ Վանին ու Հանին ել վորսի չեն  
գնում. նրանք զբաղված են իրենց ճագար-  
ներով:



4092

Պատ. խմբագիր՝ Արաբս  
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալբրուցյան  
Մրբագրիչ՝ Ս. Փարսադանյան



«Ազգային գրադարան»



NL0392775

Պետրասի սպարան, Յերեվան  
Պասվեր 950, Տիրամ 4000, Գլավիեի լիպոր Խ—9233 Հրատ. 4082

ԳԻՆԸ 1 Ռ.

395

7115

ԿԻՄ

ՊՈ

ԱՐԱԶԻ

Несчастные охотники

Гиз Арм. ССР Ереван 1937